

ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՅՈՎԿԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԳՆԱՅԱՏԱԿԱՆԸ

Համայնքային բյուջեների հարկային եկամուտների ներուժի որոշման կիրառվող մեթոդները, դրանց առավելությունները և թերությունները անընդհատ գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում¹: Մասնավորապես, ոեզրեսիոն-գործոնային վերլուծությունը պահանջում է բացահայտել և հիմնավորել համայնքային բյուջեի համապատասխան եկամուտների աղբյուրների և դրա հարկման բազան բնութագրող գործոնների միջև առկա հուսալի կապերը: Նկատի ունենալով հիմնախնդրի կարևորությունը, ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության գործոնային վերլուծության և գնահատման նպատակով առաջարկվել է համայնքային բյուջեների ֆինանսական ապահովածության գործոնային գնահատման մոտեցում, որի կառուցման հիմքում ընկած են հետևյալ քայլերը:

1. ընտրվում են եկամուտային ցուցանիշները՝ X_j ($j=1:n$, որտեղ $n=9$) և կատարված i (որտեղ՝ $i=1:m, m=8$) ընտրանքին համապատասխան² հաշվարկվում են դրանց փաստացի արժեքները,
2. կատարվում է տրենդային գնահատում, և որոշվում են մաքենատիկական տրենդը բնութագրող ցուցային կամ լոգարիթմական տեսքի հավասարումները,
3. յուրաքանչյուր i ընտրանքի համար X_j ցուցանիշների փաստացի արժեքներին համապատասխան հաշվարկվում է ինտեգրալային բալային գնահատականը, կառուցվում է ոեզրեսիոն հավասարում և գնահատվում են դրանում ներառված փոփոխականների կոռելյացիոն կապերը,
4. օգտվելով ոեզրեսիոն հավասարման մեջ կիրառված և վերլուծվող գործոնի էլաստիկության գործակցից, կատարվում է գործոնային գնահատում,
5. ենելով նախորդ քայլում ստացված գնահատականներից՝ բացահայտվում են համայնքների ֆինանսական ապահովածության տեսանկյունից լուծում պահանջող հիմնական խնդիրները:

Սույնի քայլ:

Հանրապետության համայնքային բյուջեների ֆինանսական ապահովածության գործոնային գնահատման առաջարկվող մոտեցման շրջանակներում մեր կողմից ընտրվել են հետևյալ ցուցանիշները.

- հարկային եկամուտներով ապահովածության գործակիցը՝ համայնքային բյուջեի հարկային եկամուտներ / (համայնքային բյուջեի ծախսեր-պաշտոնական տրամս-ֆերտներ) - X_1 ,
- գույքահարկով ապահովածության գործակիցը՝ համայնքային բյուջեի գույքահարկի գծով եկամուտներ / (համայնքային բյուջեի ծախսեր-պաշտոնական տրամսֆերտներ) - X_2 ,
- հողի հարկով ապահովածության գործակիցը՝ համայնքային բյուջեի հողի հարկի գծով եկամուտներ / (համայնքային բյուջեի ծախսեր-պաշտոնական տրամսֆերտներ) - X_3 ,
- տուրքերով ապահովածության գործակիցը՝ համայնքային բյուջեի տուրքերի գծով եկամուտներ / (համայնքային բյուջեի ծախսեր-պաշտոնական տրամսֆերտներ) - X_4 ,

¹Հարությունաբի Վ. Լ., Հարկային բաղարականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Չամպակ-97», 2003թ., էջ 192, Հարությունաբի Վ. Լ., Համայնքի բյուջե. Զևսվորման և օգտագործման հիմնահարցեր, Երևան, 2003թ., էջ 150, Դագարյան Է., Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նարմանների փոխարարելությունները ՀՀ-ում, Եր., «Դար», 2006, էջ 96. Փատալիևա, Յ.Ա. Ռեգиональные бюджеты на современном этапе развития межбюджетных отношений [Текст] / Յ.Ա. Փատալիևա, Հ.Տ. Օսմанова // Новая экономика: проблема становления в условиях глобализации: сборник статей преподавателей, аспирантов и соискателей. Владимиրский государственный университет. – Владимири, 2007.ст. 322-327 Broadway R., Keen M. Efficiency and the Optimal direction of Federal State Transfers. - International Tax and Public Finance, 1996, vol. 3.

² Կարող է իրականացվել ինչպես ըստ ժամանակային լազի, այնպես էլ ըստ համայնքների:

- ոչ հարկային եկամուտներով ապահովածության գործակիցը՝ համայնքային բյուջեի ոչ հարկային եկամուտներ / (համայնքային բյուջեի ծախսեր-պաշտոնական տրանսֆերտներ) - X₅,
- կապիտալի գործառնություններից եկամուտներով ապահովածության գործակիցը՝ համայնքային բյուջեի կապիտալի գործառնությունների գծով եկամուտներ / (համայնքային բյուջեի ծախսեր-պաշտոնական տրանսֆերտներ) - X₆,
- պաշտոնական տրանսֆերտներից կախվածության գործակիցը (համայնքային բյուջեին հատկացված պաշտոնական տրանսֆերտներ / (համայնքային բյուջեի ծախսեր-պաշտոնական տրանսֆերտներ) - X₇,
- համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում դրտացիաների տեսակարար կշիռը բնութագրող գործակիցը՝ համայնքային բյուջեին հատկացված դրտացիա / համայնքային բյուջեի ծախսեր - X₈,
- համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում նպատակային տրանսֆերտների տեսակարար կշիռը բնութագրող գործակիցը՝ համայնքային բյուջեին հատկացված նպատակային տրանսֆերտներ / համայնքային բյուջեի ծախսեր - X₉:

Ընտրված ցուցանիշների համար հաշվարկված արժեքները ներկայացվել են թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Համայնքային բյուջեների ֆինանսական ապահովածության գործունային գնահատման նպատակով կիրառված ցուցանիշների հաշվարկային արժեքները¹

Փոփոխականները	X ₁	X ₂	X ₃	X ₄	X ₅	X ₆	X ₇	X ₈	X ₉
Տարիները									
2001	0.560	0.348	0.206	0.086	0.206	0.05	0.851	0.449	0.0
2002	0.683	0.456	0.224	0.107	0.345	0.131	1.713	0.562	0.003
2003	0.533	0.349	0.178	0.066	0.268	0.069	0.889	0.433	0,001
2004	0.512	0.347	0.162	0.062	0.248	0.251	0.801	0.404	0,036
2005	0.477	0.339	0.137	0.059	0.236	0.226	0.929	0.437	0,057
2006	0.443	0.314	0.129	0.058	0.206	0.340	0.806	0.381	0,41
2007	0.354	0.246	0.108	0.068	0.149	0.292	0.770	0.353	0,002
2008	0.431	0.294	0.137	0.065	0.173	0.279	0.842	0.443	0,021


Առաջին քայլում կատարված հաշվարկներից հետևում է, որ ՀՀ համայնքային բյուջեներում հարկային եկամուտներով ապահովածության գործակցի արժեքները 2001-2008թթ. հետազոտված ժամանակահատվածում դրսորել է անկման միտում, ինչը փաստում է համայնքներին ամրակցված հարկային եկամուտների հարկագանձման ցածր արդյունավետության մասին: Հատկանշական է, որ նույնիսկ 2003թ. հունվարից համայնքներին գույքահարկի և հողի հարկի գանձման լիազորության ամրագրումը, ինչը պարզ տեսնում ենք թիվ 1 աղյուսակում X₂ և X₃ ցուցանիշների բերված տվյալներից, չի նպաստել հարկային եկամուտներով համայնքային ծախսերի ապահովածության խնդրի մեղմմանը: Արդյունքում նկատելիորեն բարձրացել է պաշտոնական տրանսֆերտներից կախվածության գործակցի արժեքը, որն անշափ բարձր արժեք է ընդունել 2002թ.՝ 1,713: Ներկայացված միտումները իմաց են տալիս եզրակացնելու, որ առաջիկա տարիներին ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության խնդրի մեղմման հարցում էական դեր պետք է կատարեն ֆինանսական օժանդակության և աջակցության իմմնադրամները:

Երկրորդ քայլ:


Հիմք ընդունելով թիվ 1 աղյուսակի տվյալները, այս քայլում իրականացնենք ընտրված ցուցանիշների համար տրենդային գնահատում և որոշենք մարեմատիկական տրենդը բնութագրող ցուցչային տեսրի հավասարումները: Տրենդային գնահատականների գրաֆիկական լուծումները և ցուցչային տեսրի հավասարումները ներկայացվել են թիվ 1-9 գծանկարներում:

¹ Հաշվարկման համար օգտագործվել են ՀՀ ԱՎԾ-ի 2006թ. տարեգրի՝ էջ 391-393, 2008թ. տարեգրի՝ էջ 363-364 և 2009թ. տարեգրի՝ էջ 363-365, համապատասխան տվյալները:


**Հարկային եկամուտներով ապահովածության
գործակցի տրենդային գնահատականը**




**Գույքահարկով ապահովածության գործակցի
տրենդային գնահատականը**




**Հողի հարկով ապահովածության գործակցի
տրենդային գնահատականը**




**Տուրքերով ապահովածության գործակցի
տրենդային գնահատականը**




Ոչ հարկային եկամուտներով ապահովածության գործակցի
տրենդային գնահատականը




Կայսիուալի գործառնություններից եկամուտներով ապահովածության
գործակցի տրենդային գնահատականը




Պաշտոնական տրամաֆերատներից կախվածության գործակցի
տրենդային գնահատականը



Համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում դրսացիաների
տեսակարար կշիռը բնութագրող գործակցի տրենդային գնահատականը



Համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում նպատակային տրամսֆերտների տեսակարար կշիռը բնութագրող գործակցի տրենդային գնահատականը¹



Երրորդ բայլ:

Ընտրված ցուցանիշների ինտեգրալային բալային գնահատականի հաշվարկման համար օգտվենք հետևյալ բանաձևից.

$$R = \sum_{i=1}^m \frac{1}{jn_i} \cdot X_i, (1)$$

որտեղ՝

J -ը՝ բալային գնահատման համար կիրառվող ցուցանիշների թիվն է,

n_i -ն՝ բալային գնահատման դեպքում դիտարկումների թիվն է,

X_i -ն՝ i -րդ գործակցն է,

$(1/jn_i)$ -ին՝ i -րդ գործակցի կշռային ինդեքսն է:

Առաջին քայլում թիվ 1 աղյուսակում հաշվարկված ցուցանիշների արժեքների հիման վրա թիվ 2 աղյուսակում ներկայացվել են հետազոտված համայնքների ինտեգրալային բալային գնահատականները՝ հիմք ընդունելով $j=9$, $n=8$ պայմանները:

Աղյուսակ 2

ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականները 2000-2008 թթ. ընկած ժամանակատվածում

Փոխուսականները Տարիները	X_1	X_2	X_3	X_4	X_5	X_6	X_7	X_8	X_9	Ինտեգրալային բալային գնահատականը
2001	0,0068	0,0042	0,0025	0,0010	0,0025	0,0006	0,0104	0,0055	0	0,03389
2002	0,0084	0,0056	0,0027	0,0013	0,0042	0,0016	0,0210	0,0069	0,000036	0,05195
2003	0,0065	0,0042	0,0021	0,0008	0,0032	0,0008	0,0109	0,0053	0,000012	0,03426
2004	0,0062	0,0042	0,0019	0,0007	0,0030	0,0030	0,0098	0,0049	0,00044	0,03472
2005	0,0058	0,004	0,0016	0,0007	0,0029	0,0027	0,0114	0,0053	0,0007	0,03563
2006	0,0054	0,0038	0,0015	0,0007	0,0025	0,0041	0,0099	0,0046	0,00504	0,03797
2007	0,0043	0,0030	0,0013	0,0008	0,0018	0,0035	0,0094	0,0043	0,000024	0,02880
2008	0,0053	0,0036	0,0016	0,0008	0,0021	0,0034	0,0103	0,0054	0,00026	0,03302

¹ Համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում նպատակային տրամսֆերտների տեսակարար կշիռը բնութագրող գործակցի համար ներկայացվել է լոգարիթմական տեսքի հավասարումը, քանի որ աստիճանային ֆունկցիոնալ կապ առկա չէ:

Կատարված հաշվարկներից հետևում է, որ ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային առավելագույն գնահատական արձանագրվել է 2002թ.՝ 0.0519 բալ. իսկ վատագույնը՝ 2007թ.՝ 0.0288 բալ: Հարկ է նկատել, որ մնացած տարիներին, ըստ էության, ՀՀ համայնքներում առկա է եղել ֆինանսական ապահովածության գրեթե միևնույն մակարդակը: Այսինքն, 21-րդ դարի առաջին տասնամյակում հնարավոր չի եղել ձևավորել եկամտային բավարար ներուժ և դրանով իսկ բարձրացնել համայնքների ֆինանսական ապահովվածությունը:

Այս քայլում, կիրառված փոփոխականների գործոնային վերլուծության նպատակով, կառուցվել է ուղղելուն հավասարում՝¹

$$Y = K_0 + K_1 \cdot X_1 + K_2 \cdot X_2 + K_3 \cdot X_3 + K_4 \cdot X_4 + K_5 \cdot X_5 + K_6 \cdot X_6 + K_7 \cdot X_7 + K_8 \cdot X_8 + K_9 \cdot X_9 \quad (2),$$

որը փոփոխականների կշիռները հաշվարկելուց հետո ընդունել է հետևյալ տեսքը՝

$$Y = 0.002006 + 1.060952 \cdot X_1 + 2.503182 \cdot X_2 + 0 \cdot X_3 + 0 \cdot X_4 + 0.026018 \cdot X_5 + 0.77181 \cdot X_6 + \\ + 1.081856 \cdot X_7 + 0.414285 \cdot X_8 + 0.953157 \cdot X_9 \quad (3),$$

Կառուցված ուղղելուն հավասարման վիճակագրական բնութագրիչները ներկայացվել են թիվ 3 աղյուսակում:

Աղյուսակ 3

Հետազոտված ՀՀ համայնքների ֆինանսական ապահովվածության գործոնային գնահատման ուղղելուն հավասարման վիճակագրական բնութագրիչները

Ուղղելուն վիճակագրություն						
Բազմակի R	1,0					
R քառակուսի	1,0					
Կարգավորված R քառակուսի	65535					
Ստանդարտ շեղում	0,000					
Դիտարկումներ	8					
Վարիացիայի և կովարիացիայի վերլուծություն						
	<i>df</i>	<i>SS</i>	<i>MS</i>			
Ուղղելուա	9	0,000327	0,000036			
Մնացորդային արժեքներ	0	0	65535			
Ընդամենը	9	0,000327				
	<i>F-որժակիցներ</i>	<i>Ստանդարտ շեղում</i>	<i>Ստորին 95%</i>	<i>Վերին 95%</i>	<i>Ստորին r 95,0%</i>	<i>Upper 95,0%</i>
Հաստատուն փոփոխական	0,002006	0,000	0,002006	0,002006	0,002006	0,002006
X ₁	1,060952	0,000	1,060952	1,060952	1,060952	1,060952
X ₂	2,503182	0,000	2,503182	2,503182	2,503182	2,503182
X ₃	0	0,000	0	0	0	0
X ₄	0	0,000	0	0	0	0
X ₅	0,026018	0,000	0,026018	0,026018	0,026018	0,026018
X ₆	0,77181	0,000	0,77181	0,77181	0,77181	0,77181
X ₇	1,081856	0,000	1,081856	1,081856	1,081856	1,081856
X ₈	0,414285	0,000	0,414285	0,414285	0,414285	0,414285
X ₉	0,953157	0,000	0,953157	0,953157	0,953157	0,953157

¹ Ուղղելուն հավասարման կառուցման համար կիրառվել են թիվ 3 աղյուսակի տվյալները:

ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՑՆԵՐ	ԿԱՆՀԱՍՏԵԽՎԱԾ Յ	ՄԱ. ԱՐԺԵՑՆԵՐ	ՄՈՒՋԱՐԱՏ ՄԱ. ԱՐԺԵՑՆԵՐ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Յ
Դիտարկում					6,25 0,0288
1	0,0338	0	0	18,75 0,033	
2	0,0519	0	0	31,25 0,0338	
3	0,0342	-6,93889E-18	-1	43,75 0,0342	
4	0,0347	-6,93889E-18	-1	56,25 0,0347	
5	0,0356	-6,93889E-18	-1	68,75 0,0356	
6	0,0379	-6,93889E-18	-1	81,25 0,0379	
7	0,0288	-6,93889E-18	-1	93,75 0,0519	
8	0,033	-1,38778E-17	-2	6,25 0,0288	

Հիմք ընդունելով (3) ռեգրեսիոն հավասարումը, ճշգրտվել է ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային գնահատականը: Արդյունքները ներկայացվել են թիվ 4 աղյուսակում:

Աղյուսակ 4

Հետազոտված ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության գնահատականները՝ ըստ զործոնային գնահատման (2) ռեգրեսիոն հավասարման

Փոփոխականները Տարիներ	X ₁	X ₂	X ₃	X ₄	X ₅	X ₆	X ₇	X ₈	X ₉	X ₁	Y
2001	0,002006	0,5941	0,8711	0,0000	0,0000	0,0054	0,0386	0,9207	0,1860	0,0000	2,6179
2002	0,002006	0,7246	1,1415	0,0000	0,0000	0,0090	0,1011	1,8532	0,2328	0,0029	4,0671
2003	0,002006	0,5655	0,8736	0,0000	0,0000	0,0070	0,0533	0,9618	0,1794	0,0010	2,6434
2004	0,002006	0,5432	0,8686	0,0000	0,0000	0,0065	0,1937	0,8666	0,1674	0,0343	2,6822
2005	0,002006	0,5061	0,8486	0,0000	0,0000	0,0061	0,1744	1,0050	0,1810	0,0543	2,7776
2006	0,002006	0,4700	0,7860	0,0000	0,0000	0,0054	0,2624	0,8720	0,1578	0,3908	2,9464
2007	0,002006	0,3756	0,6158	0,0000	0,0000	0,0039	0,2254	0,8330	0,1462	0,0019	2,2038
2008	0,002006	0,4573	0,7359	0,0000	0,0000	0,0045	0,2153	0,9109	0,1835	0,0200	2,5295

Հարկ է նկատել, որ եթե (1) բանաձևով ՀՀ համայնքների համար ստացված ֆինանսական ապահովածության գնահատականների միջև էական շեղումներ չեն ստացվել, ապա (3) ռեգրեսիոն հավասարման արդյունքները լրացնելու են տատանման էական միտումներ: Սաստիքորապես ֆինանսական ապահովածությունն ունեցած լավագույն տարում՝ 2002թ., ինտեգրալային բալային գնահատականը կազմել 4.0671 քալ: Սյուս տարիների գծով ստացված գնահատականները, բացառությամբ նաև 2006թ., եղել են միջին ինտեգրալային բալայից՝ 2,808-ից, ցածր: Այս դեպքում ևս, կատարված ընտրանքի շրջանակներում ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականի միջինից ցածր արժեքների գերակայությունը մեկ անգամ ևս ընդգծում է ըննարկվող խնդրի հրատապությունը, վերջինիս լուծմանն ուղղված նոր մոտեցումների ու ուղիների առաջարկման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է (3) ռեգրեսիոն հավասարման համար բազմակի կոռելյացիոն կապերի վերլուծությանը, ապա ստացված արդյունքները ներկայացվել են թիվ 5 աղյուսակում:

(3) ռեգրեսիոն հավասարման բազմակի կոռելյացիոն կապերը

	X ₁	X ₂	X ₃	X ₄	X ₅	X ₆	X ₇	X ₈	X ₉	Y
X ₁		0,98	x	x	0,90	-0,71	0,80	0,89	-0,26	0,82
X ₂	0,98		x	x	0,96	-0,57	0,85	0,89	-0,16	0,90
X ₃	x	x		x	x	x	x	x	x	x
X ₄	x	x	x		x	x	x	x	x	x
X ₅	0,90	0,96	x	x		-0,51	0,82	0,80	-0,15	0,86
X ₆	-0,71	-0,57	x	x	-0,51		-0,35	-0,56	0,56	-0,25
X ₇	0,80	0,85	x	x	0,82	-0,35		0,90	-0,22	0,94
X ₈	0,89	0,89	x	x	0,80	-0,56	0,90		-0,35	0,84
X ₉	-0,26	-0,16	x	x	-0,15	0,56	-0,22	-0,35		0,09
Y	-0,26	-0,16	x	x	0,86	-0,25	0,94	0,84	0,09	

Թիվ 5 աղյուսակում բերված բազմակի կոռելյացիոն կապերից պարզվում է, որ արդյունքային ցուցանիշի՝ Y-ի, հետ սերտ դրական կապի մեջ են հետևյալ փոփոխականները՝

1. հարկային եկամուտներով ապահովածության գործակիցը՝ X₁,
2. գույքահարկով ապահովածության գործակիցը՝ X₂,
3. ոչ հարկային եկամուտներով ապահովածության գործակիցը՝ X₅,
4. պաշտոնական տրանսֆերտներից կախվածության գործակիցը՝ X₇,
5. համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում դրտացիաների տեսակարար կշիռը բնութագրող գործակիցը՝ X₈:

Y-ի հետ բացասական կապի մեջ է կապիտալի գործառնություններից եկամուտներով ապահովածության գործակիցը և անշափի թուլ դրական կապի մեջ է համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում նպատակային տրանսֆերտների տեսակարար կշիռը բնութագրող գործակիցը:

Կոռելյացիոն կապերի վերլուծության արդյունքներից հետևում է, որ ներկա պայմաններում ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածությունը որոշող հիմնական գործոններ են, իրենց համապատասխան կառուցվածքային բաղադրիչներով հանդերձ, հարկային եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները:

Չորրորդ քայլ:

Օգտվելով կառուցված ռեգրեսիոն հավասարումից, այս քայլում որոշենք, թե հետազոտված ՀՀ համայնքներում ինչպիսի փոփոխության կենքարկվի ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականը կրնկրեալ գործոնային ցուցանիշի փոփոխության դեպքում: Այդ նպատակով օգտվենք քննարկվող գործոնի էլաստիկության գործակիցից:

1. Մասնավորապես, ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականը հարկային եկամուտներով ապահովածության գործակիցի 1 տոկոս փոփոխության դեպքում հաշվարկելու համար օգտվենք էլաստիկության՝ $\bar{\Theta}_{X_1}$ ստորև ներկայացվող բանաձևից.

$$\bar{\Theta}_{X_1} = \frac{1.060952 * \bar{X}_1}{\bar{Y}} = \frac{1.060952 * 0.4991}{2.8084} = 0,188, \quad (4)$$

որտեղ՝

\bar{X}_1 - ը հարկային եկամուտներով ապահովածության գործակիցի միջին մեծությունն է,

\bar{Y} - ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականի միջին մեծությունն է:

Հաշվարկներից հետևում է, որ հարկային եկամուտներով ապահովածության գործակիցի 1 տոկոս փոփոխության դեպքում ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականը փոփոխվում է 0,188 տոկոսով: Իրականացվող

հաշվարկներում «+» կամ «-» նշանակություն չունի, քանի որ էլաստիկության գործակիցը վերցվում է մոդուլով:

- Գույքահարկով ապահովածության գործակցի 1 տոկոս փոփոխության դեպքում ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականի փոփոխությունը կկազմի՝

$$\overline{\mathcal{E}_{x_2}} = \frac{2.5031 * \overline{X_2}}{\overline{Y}} = \frac{2.5031 * 0.3366}{2.8084} = 0.3, (5)$$

որտեղ՝

$\overline{X_2}$ -ը՝ գույքահարկով ապահովածության գործակցի միջին մեծությունն է:

Գույքահարկով ապահովածության գործակցի 1 տոկոսով ավելացումը ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականը փոփոխում է 0,3 տոկոսով:

- Ոչ հարկային եկամուտներով ապահովածության գործակցի 1 տոկոս փոփոխության դեպքում ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականի փոփոխությունը կկազմի՝

$$\overline{\mathcal{E}_{x_3}} = \frac{0.026 * \overline{X_3}}{\overline{Y}} = \frac{0.026 * 0.2288}{2.8084} = 0.0021, (6)$$

որտեղ՝

$\overline{X_3}$ -ը՝ ոչ հարկային եկամուտներով ապահովածության գործակցի միջին մեծությունն է:

Ոչ հարկային եկամուտներով ապահովածության գործակցի 1 տոկոսով ավելացումը ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականը փոփոխում է 0,0021 տոկոսով:

- Պաշտոնական տրանսֆերտներից կախվածության գործակցի 1 տոկոս փոփոխության դեպքում ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականի փոփոխությունը կկազմի՝

$$\overline{\mathcal{E}_{x_4}} = \frac{1.0818 * \overline{X_4}}{\overline{Y}} = \frac{1.0818 * 0.9501}{2.8084} = 0.365, (7)$$

որտեղ՝

$\overline{X_4}$ -ը՝ պաշտոնական տրանսֆերտներից կախվածության գործակցի միջին մեծությունն է:

Պաշտոնական տրանսֆերտներից կախվածության գործակցի 1 տոկոսով ավելացումը ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականը փոփոխում է 0,365 տոկոսով:

- Համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում դրամագիաների տեսակարար կշիռը բնութագրող գործակցի 1 տոկոս փոփոխության դեպքում ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականի փոփոխությունը կկազմի՝

$$\overline{\mathcal{E}_{x_5}} = \frac{0.4142 * \overline{X_5}}{\overline{Y}} = \frac{0.4142 * 0.4327}{2.8084} = 0.0638, (8)$$

որտեղ՝

$\overline{X_5}$ -ը՝ համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում դրամագիաների տեսակարար

կշիռը բնութագրող գործակցի միջին մեծությունն է:

Համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում դրամագիաների տեսակարար կշիռը բնութագրող գործակցի 1 տոկոսով ավելացումը ՀՀ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականը փոփոխում է 0,0638 տոկոսով:

- Կապիտալի գործառնություններից եկամուտներով ապահովածության գործակցի 1 տոկոս փոփոխության դեպքում ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականի փոփոխությունը կկազմի՝

$$\overline{\Theta_{X_6}} = \frac{0.7718 * \overline{X_6}}{\overline{Y}} = \frac{0.7718 * 0.2047}{2.8084} = 0.056, (9)$$

որտեղ՝

$\overline{X_6}$ -ը՝ կապիտալի գործառնություններից եկամուտներով ապահովածության գործակցի միջին մեծությունն է:

Կապիտալի գործառնություններից եկամուտներով ապահովածության գործակցի 1 տոկոսով ավելացումը $\angle\angle$ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականը փոփոխում է 0,056 տոկոսով: Սակայն հարկ է նշել, որ (3) ռեզերվուն հավասարումը կիրառելիս չպետք է անտեսել այս գործոնի արդյունքային ցուցանիշի հետ բացասական կապի մեջ գտնվելու հանգամանքը ևս:

7. Համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտներում նպատակային տրանսֆերտների տեսակարար կշիռը բնութագրող գործակցի 1 տոկոս փոփոխության դեպքում ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականի փոփոխումը կազմում է 0,021 տոկոսով կամ յուրաքանչյուր 10 տոկոս աճի դեպքում կապահովվի 2.1 տոկոս ինտեգրալային բալային գնահատականի մեծացում:

Վերոնշյալները վկայում են, որ.

1. $\angle\angle$ համայնքների ֆինանսական ապահովածության գործոնային գնահատման առաջարկած մոտեցումը հնարավորություն է տալիս վեր հանել ֆինանսական ապահովածության վրա ազդող էական, հիմնական գործոնները՝ կոնկրետ ժամանակային փոփում և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:
2. Դրական ազդեցություն ունեցող գործոնների մեջ էական նշանակություն են ստացել երկու հիմնական գործոնները՝ պաշտոնական տրանսֆերտներից կախվածության և գույքահարկով ապահովածության գործակիցները, որոնց 1 տոկոս գումարային փոփոխությունը $\angle\angle$ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականը ի զորու կլինի ավելացնելու $0,365+0,3=0,665$ տոկոսով: Համարժեքության համար նշենք, որ տարանջատված երկու հիմնական գործոնների յուրաքանչյուր տասը տոկոս փոփոխության դեպքում համայնքների ֆինանսական ապահովածությունը կարող է բարձրանալ 6,65 տոկոսով, ինչը շարունակական դրսերման դեպքում իր հերթին բավականին կրարելավի համայնքների սոցիալ-տնտեսական վիճակը:
3. $\angle\angle$ համայնքների ֆինանսական ապահովածության ինտեգրալային բալային գնահատականի հետ դրական կոռելյացիոն կապի մեջ գտնվող մյուս երեք գործոնների դերը բավականին թույլ է: Հատկապես մտահոգող է հարկային եկամուտներով ապահովածության գործակցի թույլ ազդեցությունը, որը մեկ անգամ ևս վեր է հանում համայնքների կողմից հարկային լիազորությունների թույլ կատարումը, առկա հարկագանձման հիմնախնդիրը:
4. Առաջիկայում $\angle\angle$ համայնքներում հարկային լիազորությունների կատարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել բարեփոխումներ:
5. Համայնքների ֆինանսական ապահովածության վրա պաշտոնական տրանսֆերտներից կախվածությունն ավելի է կարևորում ֆինանսական աջակցության այլընտրանային մեխանիզմների դերը: